ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Ա. Գ. ՄԱԼԴՈՅԱՆ

Դավիթ բեկի գլխավորած հերոսական ապստամբության վերաբերյալ մեր դիտելիքները հիմնված են գլխավորապես Ղուկաս Սեբաստացու շարադրած «Պատմութիւն Դաւիթ պէկին» աշխատության վրա, որը հայտնի է երկու՝ ընդարձակ և համառոտ խմբագրությամբ[1], ըստ որում, համառոտը բավական ուշ է հայտնի դարձել հայագիտությանը[2]։ Պատմությունը Լեոյի գնահատությամբ «XVIII դարի ամենագեղեցիկ գրական գործերից մեկն է»[3]։ Նույնը չի կարելի ասել նրա պատմական արժեքի մասին։ Ճիշտ են նկատել, որ սույն աշխատությունը անբավարար պատկերացում է տալիս ընթերցողին XVIII դ. սկզբի հայ ազատագրական շարժումների մասին։ Դրա պատճառներից մեկն ըստ երևույթին այն է, որ պատմությունը շարադրող Ղուկաս Սեբաստացուն ապստամբության մասին պատմողներն իրենք՝ Ստեփանոս Շահումյանը, Տեր-Ավետիսը և մյուսները, լինելով ռազմական այս կամ այն գործողության ականատես-մասնակից, հստակորեն չէին պատկերացնում կամ հիշում մյուս հատվածներում տեղի ունեցած իրադարձությունները։ Նկատված է, որ այսօրվա իր վիճակով «Պատմությունն» ունի մի շարք կասկածելի ու սրբագրելի տեղեր։ Կասկածելի է թվականների մեծ մասը։ Բնագրի սխալ կամ վստահելի տեղերը մատնանշելիս պետք է հանդես բերել զգուշավոր քննական մոտեցում։ Հետաքրքիր է, օրինակ, որ Լեոն, չնայած տեղյակ էր այս հանգամանքին, լավ ուսումնասիրել էր ապստամբությանը վերաբերող նյութերը, նույնիսկ պատմավեպ էր գրել Մխիթար սպարապետի մասին, մեջբերելով վերջինիս տապանագիրը, ուր ասված է՝ «Նահատակեցաւ ՌՃՀԶ (1727) թվականին», վստահում է «Պատմությանը» և ծանոթագրում. «Թվականը սխալ է, պիտի լինի ՌՃՀԹ (1730)»[4]։

Դավիթ բեկի ապստամբությունը շատ նշանակալից երևույթ էր հայ կյանքում, ուստի բնական էր սպասել ավելի լայն արձագանք։ Սերունդներն, իրոք, անդրադարձել են դրան, աշխատել դրի առնել ու փրկել մոռացությունից ապըստամբության մասնակիցների հուշերը։ Ուսումնասիրողները, սակայն, պատմության պակասը աշխատել են լրացնել գլխավորապես բանավոր ավանդություններին դիմելով, երբեմն չափից ավելի վստահություն տածելով դրանց նկատմամբ։

Կ. վ. Շահնազարյանցը Ստեփանոս Օրբելյանի «Պատմությանը» կցած առաջաբանում, որ վերնագրել է «Սինիք», ասում է, թե ինքը 1840-ական թթ

---

1 «Պատմութիւն Դաւիթ պէկին» և «Պատմութիւն իսփանցոցն»։

2 Տե՛ս «Բազմավեպ», 1938, թ. 6—9, էջ 172—187։

3 Լ ե ո, Հայոց պատմություն, Գ հատ., Երևան, 1946, էջ 1023։

4 Նույն տեղում, էջ 698։

սկզբին լինելով Սյունիքի առաջնորդ, գրել է այդ նահանգի մասին մի ստվար աշխատություն, ուր արժեքավոր տեղեկություններ են եղել Դավիթ բեկի ղեկավարած շարժումների մասին։ «Ո՞ր հայ է որոյ ոչ իցէ լուեալ զգովանի գործս հայրենասիրութեան Դաւիթ բէկի Սիւնեցւոյ, որոյ վառեալ նուիրական սիրով ազատութեան ազգին՝ փորձ փորձեաց ի սկզբան ութ և տասներորդ գարուն առ ի ազատել աշակցութեամբ քաջաց ոմանց զերկիր մեր յօտար լծոյ,— գրում է Կ. Շահնազարյանցը ու ավելացնում.— Սիրէի նստել բազում անգամ ընդ հովանաւ ալեոր բեւեկնեայ Պեխ դեղջ և լսել զվէպս հարիւրամեայ Ստեփաննոս աւագ քահանային՝ Թոռին գովելոյն Պալայ՝ միոյ յընկերացն Դաւթի։ Առի ի նմանէ նաև զստոյգ պատմութիւն քաջագործութեանց Դաւթի և եղի ի մատենադարանի սրբոյ էջմիածնի ընդ ձեռն Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսի»[5]։ Կ. Շահնազարյանցի «չորեքամեայ երկանց պտուղը» կորել է։ «Երկս այս,— շարունակում է նա,— որ (եթէ մուծեալ էր ի տիպ) կարէր սփռել լոյս մեծ ի վերայ նահանգին Սիւնեաց ըստ բազում գլխոց, եւ ուղղել զվրիպակս բազմաց ի մատենագրաց՝ ողորմելի իմն հանդիպեցաւ օրհասի»[6]։ Ն. Ադոնցը, Ե. Փեշիկյանը և ուրիշներ ափսոսանքով են հիշել այս փաստը[7]։ Հավանաբար կա՛մ Շահխաթունյանցի թղթերում, կա՛մ այլևայլ տեղերում մնացած կլինեն ինչ-որ հետքեր այդ աշխատությունից, որը կարևոր տեղեկություններ պիտի պարունակեր և ապստամբության մասին։

Այդպիսի տեղեկություններ մենք գտնում ենք նույն հեղինակի «Ծրագիր պատմություն Հայաստան աշխարհին և տեսություն Հին Հայաստանի և նրա այժմյան վիճակին վրա» աշխատության մեջ։ Դրանք, հավանաբար, հակիրճ վերարտադրությունն են կորած պատմության համապատասխան հատվածի։

Բերենք «Ծրագիր պատմության» մեզ հետաքրքրող հատվածը. «Ղարապաղն իմանալով Պետրոս Առաջինի գալը դեպի Տերբենդ, անկախության դրոշակը բաց արավ. 60000 մարդ զենք առավ ձեռին։ Դավիթ Սյունյաց իշխանը, որ մեծ զինվորական հանճարով և հայրենյաց համար գլուխը դնող մարդ էր, վրաց թագավոր Գեորգ կամ Շահ Նավազի հետ վերջին գործողության հիմունքը որոշելուց հետո, 1721 թվին Տփխիսից դուրս եկավ 40000 մարդով և գնաց Սյունյաց գավառը դրավեց և թշնամին այլևայլ տեղեր հաղթվելով, մի մասամբ ջնջվեցավ, մի մասամբ էլ դուրս քշվեցավ։ Սյունյաց նահանգն առ ժամանակ օտարներու լուծիցը ազատվեցավ։ Երբ Դավիթ Սյունյաց երկրումն էր պատերազմ տալի թշնամվույն, իր երկու զորապետները, Ավան-խան Միրզա և Ավան յուզպաշի ուրիշ երկու բաժին զորքով Ղարապաղը պաշտպանում էին... Դավիթ իշխանը, Աճանան, Կապան, Զավնտուր, Բաղաբերդ, Քյունեյի և Մեղրի գավառներին տիրելուց հետո, որ իր գլխավոր տեղն էր, Նախիջևանի խանին դեմ մի ճակատամարտում հաղթվեցավ... Սարը Մուստաֆա փաշան անհամար թյուրքմեններով, քրդերով և թաթարներով կազմած մի բանակի գլուխն անց կացած Սյունյաց երկիրը մտավ և գնաց Հալիձորի առջև բանակը դրավ, որնոր առ ժամանակյա կառավարության տեղին էր։ Դավիթ մի հաջողակ ձեռնարկությամբ, ստիպեցրուց նրան բանակը վերցնել և դաշտին վրա նրան հետ կռվելով հաղ-

5 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», ի լոյս ընծայեաց հանդերձ ծանոթութեամբք Կարապետ վ. Շահնազարեանց՝ միաբան սրբոյ էջմիածնի, հատ. Ա, Փարիզ, 1859, էջ 7—8։

6 Նույն տեղում։

7 Տե՛ս, օրինակ, «Բազմավեպ», 1938, թ. 6—9, էջ 179։

թեցն»[7]։ Այստեղ, ըստ երևույթին հիշողությամբ գրելու պատճառով, Կ. Շահնազարյանցը թույլ է տվել որոշ շփոթություն։ Սակայն ուշադրության արժանի հանգամանքներ ևս կան։ Դրանցից առաջինը ապստամբության սկսվելու ժամանակն է, որ համարվում է 1722 թ. աշունը։ Սույն քաղվածքի մեջ նշվում է 1721 թ.։ Վրիպա՞կ է դա։ Չէ՞ որ մինչ այդ խոսվում է Պետրոս Առաջինի կողմից Դերբենդի գրավվելու մասին, որ տեղի է ունեցել ավելի ուշ։ Բայց այլ վկայություններ էլ կան, որ թույլ են տալիս կասկածի ենթարկելու ընդունված թվականը։

«1720 թվականին՝ ի վերջ աշնան... Տրապիզոնի նավով եկին Թեոդոսիա հայ վաճառականք,—մեզ անհայտ աղբյուրի հիման վրա գրում է Գ. Պատկանյանը,— և համբավ բերին, որ ղարաբաղցի (Սյունյաց և Արցախաց երկրացի) հայերն՝ վրաց թագավորութենեն հրավիրել են յուրյանց հայրենակից մի քաջ անձն՝ ղարաբաղցի Դավիթ Սյունի (Դավիթ բեկ կոչյալ) վրաց զորաց սպարապետն, որ գա յուրյանց զորագլուխ դառնա և առաջնորդե, որ գուցե թե այնու փոքր ինչ հանգիստ գտանեն։ Ղարաբաղցվոց կողմեն ուղարկված դեսպանն եղել է Ստեփանոս անուն մի ազգապետ, վասնորո անունն մնացել է Ելչի Ստեփան»[9]։

Մխիթար աբեղան XVI դ. մի ավետարանի մեջ լիմ անապատում տեղի ունեցած ժողովի մասին 1722 թ. կատարել է հետևյալ գրառումը. «Քաջահամբաւ և արիասիրտ վարդապետ մի՝ յերկրէն Ուշտունեաց տէր Ներսէս անուանեալ, յոյժ յուզեաւ և լալագին պատկերացոյց դառնակսկիծ վիճակս համօրէն ազգիս և յայտնեաց ցնծագին՝ թէ այր մի երկրէն Սիւնեաց Դաւիթ բէկ անուանեալ, զորաշարժութիւն արարեալ իցէ վասն հալածելոյ նեղիչք և կշտամբիչք մեր, միտս ունենալով ազատագրելու արիւնածուփ զաշխարհն Հայաստան։ Արդ, ո՛վ բարեմիտ և հայրենապաշտ ժողովականք, շրջեսցէք գաւառս և կողմանս յերկրին ձերոյ խրախուսեսցէք ժողովուրդք ձեր, որ մրափեալ է ի խոր խաւարի և տանջանաց, զի թոթափեսցեն զլուծ անիրաւաց բռնութեանցս, և յորժամ մեք առաքեսցուք զհրաւէր մարտի, բառնան ձայն ապստամբութեան ընդդէմ մարդակեր և խաշահալած թշնամեաց մերոց»[10]։ Այս հիշատակարանը կասկածելի է համարել պրոֆ. Ա. Աբրահամյանը, պատճառաբանելով, թե Դավիթ բեկը «Սյունիք է եկել միայն 1722 թ. վերջերին և ազատագրական լայն աշխատանք ծավալել հաջորդ՝ 1723 թ., ուստի և չէր կարող Դավիթ բեկի գործունեության, նրա «զորաշարժի» արձագանքը, այն էլ Վասպուրականում, լինել 1722 թվին»[11]։ Այս փաստերն, անշուշտ, անբավարար են սրբագրելու համար խնդրո առարկա թվականը, բայց թույլ են տալիս կասկածանքով մոտենալու հարցին։

Կ. Շահնազարյանցը մատնանշում է Դավիթ բեկի և Մխիթար սպարապետի մահվան՝ «Պատմութիւն Դաւիթ պէկին» բնագրից տարբեր թվական։ «Դավիթի մեռնելուց հետո 1727 թվին Մխիթարն, իր ընտիր զորապետներից մինը, իրա տեղն անցկացավ և իր հայրենիքը պաշտպանեց մինչև 1727 թիվն, երբ մի քանի դավաճանների ձեռքով սպանվեցավ և որոնք նորուց օտարին հանձ-

8 «Կռունկ Հայոց աշխարհին», Դ տարի (1863), թ. Ը, էջ 620—622։

9 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3, էջ 147։

10 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1941, № 5—6, էջ 71—72։ Ընդգծվածը գրված է կարմրագեղով։

11 Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 79։

նեցին իրանց հայրենիքը, որնոր տակավին հայոց թափած արյունովն էր ոռոգված անկախության համար»[12]։ Այստեղ երկրորդ 1727-ը հավանաբար վրիպակ է և պետք է սրբագրել՝ 1728, հակառակ դեպքում փոքր-ինչ անիմաստ է ստացվում. Մխիթարը 1727 թ. հայրենիքը պաշտպանեց մինչև 1727 թ.։ Ինչևէ, կարևորն այն է, որ Կ. Շահնազարյանցի նշած թվականներն ավելի մոտ են իրականությանը, քան Ղուկաս Սեբաստացու բնագրի թվականները։

Դավիթ բեկի վերաբերյալ որոշ տվյալներ գտնում ենք Հովհաննես Մելիք-Սելիմյանցի աշխատության մեջ, որը գրված է գլխավորապես Մ. Չամչյանի «Պատմության» հետևողությամբ (դա երևում է և աշխատության վերնագրից)։ Հովհ. Մելիք-Սելիմյանցի մյուս աղբյուրները մեզ անծանոթ են։ Դավիթ բեկի հոր՝ Աստվածատուր-Ալլահվերդիի մասին նրա հաղորդած տեղեկությունները, օրինակ, որքան էլ կարող լինեն ստուգման, հետաքրքիր են ինքնին և արժանի ուշադրության[13]։

Մ. Չամչյանը և իր հետևորդները (Հ. Մելիք-Սելիմյանց, Մ. Մաղաք-Թեոփիլյան և ուրիշներ) պատմում են մի դեպք, որ վերաբերում է Դավթի ռազմական հնարամտությանը։ Անտարակույս, Մ. Չամչյանը ձեռքի տակ ունեցել է այդ մասին ավանդող աղբյուր, որից օգտվել է։ Դա կարող էր լինել նաև Դավիթ բեկի պատմությունը, որ այժմ չունի մատակ ձիերի հետ կապված հետևյալ դեպքի նկարագրությունը. «Փութացան այլազգիք և առաւել բազմութեամբ եկեալ պաշարեցին զՀալիձոր։ Եւ յայնժամ Դաւիթ ձեռն էարկ ի նոր հնարս ապատելոյ ի նոցանէ։ Ունէր առ իւր զվաթսուն մատակ երիվարս. և զի գիտէր թէ այլազգեացն էին առհասարակ որձք մատակախազք, արձակեաց զմատակս իւր ի բանակ նոցա. և ի խառնիլ ձիոցն, անկաւ շփոթութիւն մեծ յայլազգիս. և յայնմ պահու յարձակեալ ի վերայ նոցա Դաւիթ, ցիրեցան արար զնոսա, և բազում աւարաւ եմուտ յամրոցն»[14]։

Նման մի շարք մանրամասներ ու նկարագրություններ կան Գ. Շերմազանյանի «Ճանապարհորդություն Հայաստանումը» շատ բանով հետաքրքրական ուղեգրության մեջ, որ նախ տպագրվել է «Կռունկ Հայոց աշխարհին» հանդեսում, իսկ հետո, կրճատումներով՝ «Արարատ» ամսագրում։ Ապստամբության մասին տեղեկություններ հաղորդող ծերունին, լինելով Պապի ազգականը, ավելի հանգամանորեն է խոսում նրա դժգոհության մասին, առհասարակ հայ զորահրամանատարների գժտությունների մասին։ Մինչդեռ Դավիթ բեկի պատմության հեղինակը անմիաբանության ու երկպառակությունների մասին աշխատում է քիչ խոսել, նրա նպատակը միաբանությունը պանծացնելն է։ Ինչպես նկատել է պրոֆ. Աշ. Հովհաննիսյանը, «կատարված

---

12 «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, էջ 622։

13 Տե՛ս Մատենադարան, ձեռ. 2888. «Համառօտութիւն պատմութեան Հայոց սկսեալ ի նախնոյն Հայկայ մինչև ցաւուրս Ղուկասու սրբազան կաթողիկոսին ցամ տեառն 1784 և Հայոց ՌՄԼԳ. բովանդակեալ ի վեց գիրս. Աշխատասիրեալ Զմիւռնացի Յովհաննու Մելիք-Սելիմեանց. յաւուրս Յովհաննէս սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց յամի տեառն 1829 ի սուրբ Էջմիածին», թղ. 334ր։ Ի դեպ, նշենք, որ այստեղ ևս կա մի տխուր պատմություն, կապված Հովհ. Շահխաթունյանի անվան հետ. «Յովհաննէս արքեպ. Շահխաթունեանց, որ ժամանակ մի պահեալ զսա առ ի բաց հանեալ է զընդարձակ յառաջաբանութիւն հեղինակին հանդերձ ճակատագրովն մատենին և զվերջին շարունակութիւն պատմութեանն քանի մի գլխովք»,—կարդում ենք ձեռագրի «Ազդի» մեջ (թղ. 5ա)։

14 Տե՛ս Մ. Մաղաք-Թեոփիլեան, Կենսագրութիւն երևելի արանց, էջ 185։ Հմմտ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, էջ 796, ձեռ. 2888, թղ. 337ա։

իրողությունների ստույգ շարադրանք լինելուց առավել, «Ընտիր պատմութիւնը» Սյունյաց երկրի նվաճողներին զինական դիմադրություն ցույց տալու հորդոր է։ Գրքի գաղափարախոսական այդ ուղղվածության մեջ է հենց XVIII դարի կեսերին շարադրված այդ գործի բացառիկ արժեքը»[15]։

Դավիթ բեկը, ծերունի Սրապիոնի պատմելով, «Արցախի կողմերեն գաղթած երբեմն Վրաստուն ու երկար ժամանակ ծառայած յուրյանց արքունիքի միջին, վաստակած փառք-պատիվ և պաշտոն զորագլխության», գալիս է Սյունիք[16]։ Այստեղ կան նոր անուններ, կան ռազմական կյանքի մանրամասներ, ինչպես՝ լրտեսների բերած տեղեկություններ, թուրքերի՝ վարձու զորքեր ունենալը, զափանցիների՝ ավարը միայն շարքային զինվորականներին բաժանելու դեպքը և այլն։

Ուշագրավ է, թեպետ ստուգման կարոտ, հետևյալ վկայությունը, որ համահնչյուն է Կ. Շահնազարյանցի տեղեկությանը՝ «առ ժամանակյա կառավարության» մասին և չի հակասում Ղուկաս Սեբաստացու «Պատմությանը». «Որոնա բերդը առնելն էր մի փառավոր հաղթություն, որիցը ծագեց հայերի մտքումը զանազան գաղափարներ, ուստի ժողովեցան բոլոր իշխանները, մելիքները և երևելիները, խորհուրդ արին ու հաստատեցին զԴավիթ բեկն յուրյանց վերա ղլխավոր մեծավոր (սարդար), իսկ զմյուս մելիքները կամ զորք ունեցողները զորավար անվանեցին, զոր օրինակ Մխիթար զորավար, Թորոս զորավար, Փարսադան զորավար ևն. և խոսք կար թե, մտադիր են նշանակել զԴավիթ բեկը թագավոր և օծել Տաթևի վանքումն և թե սպասվում է վրաց թագավորեն դեսպան գա և թագ բերե»[17]։ Ցավոք, ծերունի Սրապիոնի պատմածը նախ գրի է առնվել պարսկերեն և հետո է թարգմանվել հայերեն, այլապես կիմանայինք, թե ինչպես են կոչվել հայ զորահրամանատարները։ Սա ասում ենք, նկատի ունենալով Լեոյի դիտողությունը. «Սպարապետ», «զորավար», «զորապետ», «իշխան» գործածական չեն եղել Ղափանում, այլ Դավիթ բեկի պատմությունը գրող Մխիթարյան վարդապետն է կիրառության մեջ մտցրել՝ հարմարելով հին հայկական տիտղոսներին»[18]։

Մի այլ տեղեկություն հաղորդում է Մ. Մաղաք-Թեոփիլյանը, հնարավորություն տալով մոտավորապես որոշելու Դավիթ բեկի ծննդյան թվականը։ Դավիթը, ասում է նա, «անկաւ հիւանդութեամբ մահու, որով և մեռաւ ի Հալիձոր, յամի տեառն 1728 ի հասակի իբր 54 ամաց. վարեալ զիշխանութիւն իւր զամս վեց»[19]։ Եթե մահվան թվականը համարենք 1728-ը, ապա ըստ սույն տեղեկության Դավիթը ծնված պիտի լինի 1674 թ.։ Բայց, ինչպես ճիշտ նկատել են հետազոտողները (Պ. Հարությունյան, Աշ. Հովհաննիսյան և ուրիշներ), այդ թվականը մերժելի է։ Տեսանք, որ Կ. Շահնազարյանցի աշխատության մեջ Դավիթը մահացած է համարվում արդեն 1727 թ.։ Եթե ճիշտ է այն ենթադրությունը, թե նրա մահվան թվականը 1726-ն է (ինչպես Հ. Կրուշինսկին էլ է վկայում), ապա նա ծնված պիտի լինի 1672 թ.։

---

15 «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1, էջ 101։ Հավանական է Սահակ ձեմ-Հեմյանի ենթադրությունը, թե «Պատմությունը» գրվել է 1736—1737 թթ. (տե՛ս «Բազմավեպ», 1972, թ. 4, էջ 492)։

16 Տե՛ս «Արարատ», 1877, թ. ԺԱ, էջ 412։

17 Նույն տեղում, էջ 415—416։

18 Լեո, Հայոց պատմություն, հատ. Ը, էջ 674։

19 Մ. Մաղաք-Թեոփիլյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 185։

Դավիթ բեկի ապստամբությանը նվիրված գրականության մեջ բավական շատ է խոսվել հերոսի ծագման և ծննդավայրի շուրջը, որոնց վերաբերող տեղեկությունները հակասական են ու անվստահելի։ Սրա պատճառներից մեկն այն է, որ ժամանակակիցների մեջ եղել են այլ բեկեր՝ նույն անունով (Դաւիթ, Դաուիթ, Դաուիթ)։ Այժմ, թեև հեշտ է համոզվելը, որ այս կամ այն փաստաթուղթը կապ չունի Ղափանի շարժումների ղեկավարի հետ (այսինքն՝ այնտեղ հիշատակվող Դավիթը ուրիշ անձնավորություն է) կամ վերաբերում է նրան, բայց կեղծիք է, սակայն բավական դժվար է կողմնորոշվել, անվերապահորեն մերժել կամ հետևել հիշյալ փաստաթղթերին։ Ուստի պետք է առավելագույն զգուշություն ցուցաբերել այդ վկայությունների նկատմամբ։

Այդ կարգի վկայագիր է Մաշտոցի անվան Մատենադարանի № 5794 ձեռագրում Ղուզանանց Թաղիի հիշատակարանը, որին վստահում են ուսումնասիրողներից շատերը, անվերապահորեն հենվելով նրա վրա։ Մինչդեռ Թաղիի խոսքը բավական խառնաշփոթ է, հաճախ՝ անհասկանալի։ Պրոֆ. Ա. Աբրահամյանն, օրինակ, երբ հետևում է Ղուզանանց Թաղիին, գտնում է, որ Դավիթ բեկի հայրը Ալիխան[20] է, իսկ երբ օգտվում է Դանիել գրչի տեղեկություններից՝ Աստվածատուր[21]։ Բայց այդ ոտանավոր-հիշատակարանում հիշված Աստվածատուր Աբրոյանը Դավիթ բեկի հայրը չէ (անունները պատահմամբ համընկել են)։ Նկատենք, որ գրչի խոսքից չի կարելի եզրակացնել, թե Դավիթ բեկը սյունեցի է, «Հաբանդ գավառից» (թեպետ չի բացառվում, որ Ղափանից լինի), ինչպես գրում է Ա. Աբրահամյանը։ Բայց նախ բերենք ոտանավորը.

Սակաւագիծ ճառս վիպական,
Վիպէ զարարս քաջին Դաւթեան,
Որ ի յԱբանդ տան Սիւնական
Վասն հաւատոյ քրիստոսական։

Ղօղեալ ելով ի Խորշ անկեան,
Ի տան մեծի քաջազարմեան,
Աստուածատուրոյ մեծ Աբրօեան
Յորմէ առաք զպատճեն սորայն։

Բանաստեղծական առաջին տան երրորդ տողով հեղինակը նշել է Դավթի գործելու և ոչ ծննդյան վայրը։ Այս երկու տնով գրիչն ուզում է ասել՝ սույն համառոտ վիպական երկը («Պատմութիւն Դաւիթ պէկին») պատմում է քաջ Դավթի սխրանքները Աբանդում, որ նա գործել է քրիստոսական հավատքի համար։ Ձեռագիրը, որից նա ընդօրինակում է, պահված էր քաջազարմ Աստվածատուր Աբրոյանի տանը։ Թերևս սա զմյուռնացի նշանավոր Ապրոյաններից է, որոնք Ամստերդամում մտերմական կապեր ունեին Պետրոս Առաջինի հետ[22]։

Վստահություն չի ներշնչում նաև Մատենադարանում պահվող՝ փոխգնդապետ Ստեփաննոս Դավիտովի ազգաբանության վերաբերյալ գրությունը[23]։ Հրատարակիչը հնարավոր է համարում, որ սա կեղծիք լինի, բայց չնայած դրան լիովին վստահում է գրությանը։ «Հարց է առաջանում,— գրում է նա,—

20 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» (հետագայում՝ ՊԲՀ), 1972, № 4, էջ 178։

21 Նույն տեղում, էջ 167։

22 Տե՛ս Հ. Թ ա դ ե ո ս յ ա ն, Պատմություն տոհմի և Լազարյան ճեմարան արևելյան լեզվաց, Վիեննա, 1953, էջ 24։

23 Տե՛ս Ա. Ա ր ր ա հ ա մ յ ա ն, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 237—239։

չի՞ կարող պատահել, որ գնդապետ Ստեփանոսը, ազնվականի կոչում ստանալու համար, կեղծած լինի իր genեոլոգիան՝ աշխատելով կապել իրեն Սյունիքի ազատագրական շարժումներում հերոսացած Դավիթ-Բեկի հետ: Անհավանական ոչինչ չկա, մանավանդ եթե նկատի ունենանք, որ այդ ժամանակ ազնվական կոչում ստանալու համար փաստաթղթեր կեղծելը սովորական երևույթ էր: *Սակայն, առայժմ, մենք փաստեր չունենք տվյալ վավերագիրը կեղծ համարելու»*[24]:

Ինչ վերաբերում է Դավիթ բեկի որտեղացի լինելուն, կարելի է պնդել, որ նա Սյունիքից է՝ լայն առումով, ներառյալ նաև Ղարաբաղը: Ավելի ճշգրտել առայժմ հնարավոր չէ, առկա փաստերը թույլ չեն տալիս:

Դավթի ծագման վերաբերյալ թերևս միակ վստահելի տվյալը «բեկ» կոչումն է, որ մատնացույց է անում իշխանական (մելիք) զարմից լինելը: Բայց ահա Պ. Հարությունյանը թերագնահատում է այս փաստը: Ամենուր «գյուղացիականը» տեսնելու նրա ձգտումն այստեղ ըստ երևույթին վճռական դեր է կատարել: Իբրև պոստուլատ ընդունելով Դավթի հասարակ ծագումը, նա գրում է. «Դավիթ բեկի նման նա (Մխիթար սպարապետը) «բեկ» տիտղոսը կրում էր ոչ թե տոհմական ծագման իրավունքով, այլ իբրև ռազմական կազմակերպիչ և ղեկավար Ղափանի հայերի», այնուհետև շարունակելով՝ «Ինչպես Դավիթ բեկին, այնպես էլ Մխիթար բեկին մենք համարում ենք ժողովրդական զանգվածների շահերի ներկայացուցիչ և շարժումների ղեկավար»[5], *կարծում ենք, որ հարցը մնում է չլուծված:*

Ժամանակին «Դավիթ բեկ» վեպի պատմական հիմքը և գաղափարական արժեքը» ոչ մեծ, բայց ծանրակշիռ իր հոդվածում Ն. Ադոնցը լուծել է Ղափանի ապստամբության հետ կապված մի շարք հարցեր, որոնք հետագայում նորից և իզուր զբաղեցրել են ուսումնասիրողներին: Սրանք հաճախ հանգել են նույն եզրակացություններին, ինչ Ն. Ադոնցը, երբեմն էլ, անգիտելով նրա ուսումնասիրությունը, սխալ ուղիով են ընթացել, և որքան դյուրահավատ են եղել պատահական փաստաթղթերի նկատմամբ, նույնքան կասկածով են նայել Դավիթ բեկի «Պատմությանը»: Քննադատական վերաբերմունքը ի վերջո անցել է իրավացիության սահմանները, հանգել մանրախնդիր, ինքնանպատակ «սրբագրումների»:

«Ստեփանի ավանդած պատմությունը բավականին խառնակ է: Ինքը՝ անվարժ պատմող, Ղուկաս վարդապետը՝ վարժ գրող, միասին աշխատելով շատ բան շփոթել են, չափազանցրել և երբեմն գայլվահանյան գույն տվել, խախտելով ընթերցողի վստահությունը»,— իրավացիորեն գրել է Ն. Ադոնցը[26]:

---

24 *Նույն տեղում, էջ 94 (ընդգծումները մերն են): Փաստերի նկատմամբ կողմնակալ այս մոտեցումը եզակի չէ: Մի այլ հարցի կապակցությամբ Ա. Աբրահամյանը գրում է. «Ըստ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի տեղեկության, խանական զորքերը փորձել են Սյունիք խուժել 1723 թ. ամռանը: Այդ մասին նա հաղորդել է ռուսական արքունիքին. «Վերոյ Բարեղումն (նկատի ունի 1723 թ. օգոստոս ամիսը) որ խարար արնկ,— գրել է նա ռուսական արքունիքին,— թե զզլբաշն գնացել այ Ղափանստան մտել...»: Մինչդեռ Գիլանենցը, այնտեղ, ուր Ա. Աբրահամյանը կախման կետեր է դրել, ավելացնում է. «էս խարարն էլ դեռ ճիշտ չէ» (հմմտ. «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, էջ 207 (Ա. Աբրահամյան, Մի էջ..., էջ 83, «ՊԲՀ», 1972, № 4, էջ 170):*

25 П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, էջ 270 *(ընդգծումները մերն են):*

26 *Տե՛ս «Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան). կյանքը, գրականությունը, հիշողություններ-ժողովածուն, Փարիզ, 1937, էջ 129:*

Անդրադառնալով այն հարցին, որ Գուգարաց («Պատմության» ընդարձակ խմբագրության՝ Վենետիկում պահվող ձեռագրում՝ Քուքարացոց)[27] Հովհաննես իշխանին վերաբերող տեղեկությունները կցկտուր են ու անհասկանալի, Ն. Ադոնցը գրում է. «Գուգարացի՝ Ղուկաս վարդապետի ենթադրությունն է, որ ներել կարելի էր եթե Դազուրացի ասեր, համաձայն Խորենացու գործածության։ Թվում է թե Հովհաննեսն այն Ավանն է, մինը չորս կտրիճ երիտասարդներեն, որ զենքով դիմադրեցին լեռնականներին Ջրաբերդում։ Հավանական է, որ Ավանը ուղեկցած լինի Դավիթ բեկին կամ լուրեր տարածված լինեին, թե Խամսայի երկրից օգնություն պիտի գար նրան»[28]։ Հովհաննես Գուգարաց իշխանի և Ավանի այս ենթադրական նույնացումը հետագայում օրինականացվեց, և խոսք անգամ չկա Ն. Ադոնցի սույն ենթադրության մասին։ Այդ կապակցությամբ Ա. Աբրահամյանը գրում է. «Ղարաբաղից Սյունիք եկած այս օգնության մասին տեղեկություն կա և «Ընտիր պատմութեան» մեջ... Այստեղ «Ընտիր պատմութեան» հեղինակը, սակայն, թույլ է տվել երկու անճշտություն. Դիզակի Ավան յուզբաշուն դարձրել է գուգարքեցի և Ղարաբաղի 20000 հոգուց բաղկացած զորաբանակի թիվը մեծացնելով հասցրել 56000-ի»[29]։ Նկատելի է, որ այս «սրբագրությամբ» չի հարթվում, հասկանալի չի դառնում Հովհաննես իշխանի առեղծվածային արշավը դեպի Ղարան։

Թյուրիմացությունը, ինչպես տեսնում ենք, սկսվել է նրանից, որ ուսումնասիրողները Հովհաննես իշխանին փնտրել են երբեմնի բդեշխություն Գուգարքում (Լոռի, Ջավախք, Արդահան են) և ավելորդ կրքով քննադատել Դավիթ բեկի «Պատմության» բնագիրը, մինչդեռ խոսքը վերաբերում է Գագուրքին, ինչպես կռահել է Ն. Ադոնցը։

Դիզակի Գտիշ վանքի վանահայր Առաքել վարդապետի աշխատության մեջ (որ Բաֆֆու «Խամսայի մելիքությունները» աշխատության ձեռագիր աղբյուրներից մեկն է, հետագայում մասամբ հրատարակված) մի այլ, ավելի հին ձեռագրից մեջբերված են պատմական տեղեկություններ։ Ահա դրանցից մեկը «...մինչ երկիրս ընդ տիրապետութեամբ պարսից իշխանութեանն կայր, ի թուականիս հայոց ՌՃՀԱ (1722) էր, եկն համբաւ յայնկոյս կողմանցն Կուր գետոյն, թէ գուգարացիք (այսինքն շաքեցիք) միաբանեալ են ընդ լեռնաբնակ ազգին լեղկաց՝ չծառայել բնաւին իշխանութեան պարսից և չտալ դպայմանեալ զարքունական հարկսն»[30]։ Այս ուշագրավ տեղեկությունից մեզ տվյալ պահին հետաքրքրում է գուգարացիք բառի բացատրությունը՝ «այսինքն շաքեցիք»։ Ի միջի այլոց Առաքել վարդապետը ուրիշ անգամ գործածում է նաև «գազուրացիք»[31]։ Դա չի՞ նշանակում, թե գոնե XVII դարում այս երկու անվանումները զուգահեռաբար գործածվել են։ Հնարավոր է, որ «Գագուրքը», տոնմանվելով հիշյալ բդեշխության անվանը, դարձել է «Գուգարք», բայց այս

27 Տե՛ս «Բազմավեպ», 1938, թ. 6—9, էջ 180։

28 «Բաֆֆի» ժողովածու, էջ 126։

29 «ՊԲՀ», 1972, N 4, էջ 172. հմմտ. նաև Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, էջ 83, նույնի՝ «Դավիթ բեկի պատմության» նախագաղափար բնագիրը», «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, N 3, էջ 90, 110։

30 «Նյութեր հայ մելիքության մասին», Ա պր., Առաքել վարդապետ, Դիզակի մելիքությունը, Վաղարշապատ, 1913, էջ 14։

31 Տե՛ս նույն տեղում, էջ 16։

վերջին ձևն ավելի է ընդհանրացել։ «Գուգարքի» գործածության բազմաթիվ փաստերից հիշենք մեկ-երկուսը։

«Այս աշխարհ Գուգարաց ասի ևս լինել ի սահմանակցութեան Աղուանից. և այս վասն այնորիկ՝ զի է առ երկրի Ուտի աշխարհին, որ համարիւր մասն Աղուանից. և կոչիւր Աղուանք Հայոց»[32],— գրում է Մ. Չամչյանը։ Նա Հովհաննես իշխանի մասին խոսելիս գործածում է երկու անուն՝ «ուտեացւոց» և «գուգարացւոց»[33]։ Այս Գուգարքը Ուտիքի հետ նույնացվում է նաև Մ. Չամչյանի հետևողությամբ շարադրված պատմություններում։ Հովհ. Մելիք-Սելիմյանցն, օրինակ, գրում էր. «Զայն տեսեալ հայոց բնակելոց յաշխարհին Ուտեցւոց կամ Գուգարացւոց՝ որ ի Մեծ Սղնախ. յորում և տիրէր Յովհաննէս իշխան ոմն...»[34]։ Մի օրինակ էլ բերենք Մ. Չամչյանից. «Եւ բազումք ևս շոքան յաշխարհն ուտեացւոց և գուգարացւոց և յարեցան ի մեծ իշխանն Յովհաննէս։ Եւ սա ինքն Յովհաննէս ևս բազումս պատերազմեալ ընդ այլազգիս՝ հուսկ յետոյ ետ զքաղաք իւր ի ձեռս նոցա. և ինքն քանի մի ընկերօք ճանապարհորդեալ ընդ Կասպից ծով՝ գնաց յԱժդարխան. և անդ մեծարեալ յիշխանէ տեղւոյն՝ եգիտ պատիւ ի նմանէ»[35]։ Սա չի՞ նշանակում, թե ճիշտ չէ Հովհաննես իշխանին Ավանի հետ նույնացնելը։ Վերջինս վերաբնակվել է ոչ թե Աստրախանում, այլ՝ Գիլանում։

Ն. Ադոնցը դիտողություն է արել և Ղուկաս Սեբաստացու շարադրանքի սկզբի վերաբերյալ. «Գործի նախաձեռնությունը Ստեփանը վերագրում է իրեն։ Այս կետը ավելի քան կասկածելի է. ...եթե Ստեփանը լիներ մեծ խորհուրդի հղացողը, Դավիթ բեկը նրան իր մոտ կպահեր իբրև մերձավոր գործակից»[36]։ Հետագայում այս դիտողությունը ևս ոմանք կրկնեցին[37]։ Բայց պետք է նկատել, որ Ն. Ադոնցին հայտնի չէին որոշ հանգամանքներ, որ պարզվեցին հետագայում։ Դրանցից է այն, որ Պատմությունը շարադրելիս Ղուկաս Սեբաստացին միայն մեկ թելադրող չի ունեցել. Շահումյանից բացի նրան ապըստամբության մասին պատմել են «Տեր-Ավետիսը և ուրիշներ», ուրեմն այս բանը հաստատած պիտի լինեն նաև մյուս պատմողները։ 1938 թ. հայտնի դարձավ այս փաստը՝ Եղիա Փեշիկյանի հաղորդման շնորհիվ։ Դրան ծանոթ չէր նաև Լեոն, որ Շահումյանի՝ թուղթը տանելու վարկածը «անարվեստ հերյուրանք» է համարում, արդյունք նրա սնապարծության[38]։ Պ. Հարությունյանը այս կապակցությամբ քննադատում է «Պատմության» հեղինակին այն բանի համար, որ նա իբր աշխատում է մթագնել Ղափանի ազատագրական կռիվների ժողովրդական, գյուղացիական բնույթը[39]։

Գրեթե բոլոր աղբյուրները վկայում են, սակայն, որ այդպիսի գրություն

---

32 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 142։

33 Տե՛ս նույն տեղում, էջ 784։ Հմմտ. նաև Ե. Գեղամյան, Հայերի ազատագրական շարժումները ԺԸ դարում, Բաքու, 1915, էջ 102. „Bibliograpia Caucasica et Transcaucasica, Опыт справочного систематического каталога печатным сочинениям о Кавказе, Закавказьи и племенах, эти края населяющих», составил М. Мнансаров, г. I, отд. I и II, СПб., 1874—1876, էջ 549։

34 Մատենադարան, ձեռ. 2888, թղ. 334ա։

35 Մ. Չամչեան, նշվ. աշխ., էջ 800։

36 «Բաֆֆի» ժողովածու, էջ 130։

37 Տե՛ս, օրինակ, Ա. Աբրահամյանի հոդվածը, «ՊԲՀ», 1972, № 4, էջ 162—163։

38 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, էջ 668։

39 Տե՛ս Պ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 249։

եղել է, իսկ դրանց մեծ մասը հաստատում է նաև, որ գրությունը տարել է Ստեփանոս Շահումյանը. աղբյուրներից մեկը նույնիսկ, ինչպես տեսանք, Շահումյանին անվանում է Ելչի Ստեփան։

Իհարկե, նամակը տանելը չի նշանակում, թե «մեծ խորհուրդի հղացողը» Շահումյանն էր։ Այս հարցում կա՛ կեղծիք՝ այն, որ 50 մելիքների փոխարեն Շահումյանն է ստորագրել թուղթը, և դա արված է ոչ սնափառության համար, այլ հեռատեսորեն, նախաձեռնողների խմբին չմատնելու համար։ Չէ՞ որ նրանց մեծ մասը հայրենիքում էր, հակառակորդների շրջապատում, իսկ պայքարը, եթե մարել էր, չէր ավարտվել։ Պատմությունը ոչ թե ավարտված, անցած-գնացած իրադարձությունների պարզ արձանագրություն էր, այլ կենդանի, ընթացիկ կյանքին վերաբերող վավերաթուղթ[40]։

Որ Շահումյանը, Տեր-Ավետիսը և մյուսները 30-ական թթ., կամ գուցե փոքր-ինչ ուշ, զգուշանալու էին, երևում է նաև Արցախի մելիքների և ռուսական արքունիքի նամակագրությունից։ Ապստամբությանը վերաբերող հարցերի մասին ինչպես նրա մասնակիցները, այնպես էլ ռուսական արքունիքը, զգուշությամբ էին խոսում։ Մինաս վարդապետը ևս 1736 թ. զգուշանում էր։ «Իշնամիները՝ թուրքերն ու պարսիկները, իմացել են մեր գաղտնիքը,— հայտնում էր նա կոմս Ս. Սալտիկովին հղած զեկուցագրում,— իսկ ինձ համար այդ պատճառով և՛ թուրքական, և՛ պարսկական հողերը՝ հարազատներիս մոտ, ընալ անհնարին է»[41]։

Պրոֆ. Ա. Աբրահամյանն ընդունում է, որ Դավիթ բեկին հրավիրել են Սյունիք, չնայած տարակուսանքով է խոսում մեզ հետաքրքրող հարցի մասին։ «Ստացվում է այնպես,— գրում է նա,— որ եթե չլիներ Ստեփանոս Շահումյանցը, ապա ո՛չ վրաց արքունիքը Դավիթ բեկին կուղարկեր Սյունիք, և ո՛չ էլ այնտեղ ազատագրական շարժումներ կառաջանային»[42]։

1790 թ. Հովսեփ Արղությանը գրում էր Եկատերինա II-ին, թե հայ մելիքները, հուսով, որ Պետրոս I-ը օգնության կհասնի, Շահնավազին խնդրեցին իրենց տալ հմուտ զորահրամանատար, որ կարողանա ղեկավարել իրենց զորքերը։ Եվ Դավիթ բեկը հավաքում է մինչև 60.000 զորք, հրամանատար նշանակելով Ավան խան Միրզային ու Ավանին, ինքը գլխավոր զորախմբով բանակում է Ղափանում, «Զավունդուրի մոտ»[43]։ Ըստ մի այլ տեղեկության, նույնպիսի խնդրանքով մելիքները 1725 թ. դիմել են կայսերը[44]։ Սա անհասկանալի է և քիչ հավանական։

«Վկայագիր Ուռպելեանց» կոչված վավերագիրը (որ կազմված է 1835 թ.) հաղորդում է. «Բնակիչք Սիւնեաց ի 1722 ամին գրեցին զթուղթ աղաչանաց առ Շահնաւազ իշխան՝ առաքել զօրաւոր ոք զի իշխեսցէ ի վերայ զաւառին և յանպորրու պահեսցէ զՀայս որք ի նմին»[45]։ Բաֆֆու օգտագործած ձեռագրերն էլ հաստատում էին, որ Ղարաբաղի մելիքներն են դիմել Շահնավազին[46]։

40 Հմմտ. «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1, էջ 101։

41 Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, էջ 461։

42 «ՊԲՀ», 1972, № 4, էջ 163, նաև 162, 164։

43 Տե՛ս Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. II, М., 1838, էջ 55։

44 Տե՛ս նույն տեղում, էջ 194։

45 Բաֆֆի, Դավիթ բեկ, Վիեննա, 1903, էջ 787։

46 Տե՛ս Բաֆֆի, Խամսայի մելիքությունները (1600—1827), նյութեր հայոց նոր պատմության համար, երկրորդ տիպ, Թիֆլիս, 1895, էջ 33։

Միայն Գ. Շերմազանյանի վերևում հիշված ուղեգրության մեջ է, որ մեզ հետաքրքրող շրջաբերականի նախաձեռնողը ուրիշն է՝ ոմն Ռուստամ խան, որը «Կարաբաղի երևելի մելիքներեն և ժողովրդեն» գրություն է տանում «վրաց թագավորին ու միջնորդներ ձգում, որպեսզի զորք ուղարկև օգնել նոցա և զինքը զորավար կարգե», իսկ թագավորը «մերժում է նրա առաջարկությունը և նշանակում է մի քաջ անձն Դավիթ բեկ անուն, Արցախի կողմերեն դաղթված երբեմն Վրաստուն ու երկար ժամանակ ծառայած յուրյանց արքունիքի միջին, վաստակած փառք և պաշտոն զորագլխության»[47]։

Առկա փաստերն անբավարար են և հնարավորություն չեն տալիս վերջնականապես ճշտելու խնդիրը։ Շահումյանը կարող էր լինել նաև պատվիրակության անդամ։ Բայց տվյալ դեպքում այնքան կարևոր չէ՝ ով է հիշվում իբրև նախաձեռնող, որքան՝ շրջաբերականի գոյությունը, որ կասկածից վեր է։

Որոշակի տվյալներ չունենք մենք Ղափանի շարժման կողմնորոշման մասին։ Հավանաբար գլխավորապես այս խնդրի կապակցությամբ են եղել տարաձայնությունները ապստամբության ղեկավարների միջև, որ ավելի աշխուժացան Դավթի մահից հետո։ Ճիշտ է, Ղարաբաղում ևս կային տարբեր կողմնորոշումներ, բայց ուժեղ թևը, ճնշող մեծամասնությունը Ռուսաստանի կողմն էր։ Ի՞նչ հիմք կա այդպես մտածելու։ Ամենից առաջ այն, որ Արցախը մշտական կապ ուներ ռուսաց արքունիքի հետ, իսկ Ղափանը՝ ոչ։ Արքունիքի գրագրությունների մեջ դեպքից դեպք էր հիշվում Ղափանի անունը։ Իվան Կարապետը մշտապես Ղարաբաղում էր նստած և այլն։ Ըստ երևույթին, Ղափանում ռուսական կողմնորոշումը ներկայացնողները նրանք էին, որ Դավիթ բեկից հետո, Մխիթարի գլխավորությամբ դիմեցին ռուսներին՝ օգնության խնդրանքով։ Դավիթ բեկը հավանաբար հույսերը կապում էր սեփական, ներքին ուժերի հետ։

Արդյոք կողմնորոշման հետ չէ՞ր կապված այն հանգամանքը, որ Տեր-Ավետիսը, Ստեփանոս Շահումյանը և ուրիշներ, ավարտված համարելով իրենց առաքելությունը կամ գուցե գժտվելով ընկերների հետ, գնացին Իտալիա, իսկ ոմանք՝ Պարսկաստան։ Մինչդեռ Արցախի ապստամբության ղեկավարները վերաբնակվեցին կամ Ռուսաստանում, կամ նրա յուրացրած մերձկասպյան հողերում։ Մխիթարի մահից հետո, ըստ Հովհ. Մելիք-Սելիմյանցի, «ցրուեցան զօրք Մխիթարայ. և որք իշխանք էին Դաւթի յայլ և այլ տեղիս անգլուխ ինայեալ գնացին ի Պարսս, և բազումք ևս յարևցան ի մեծ իշխանն Յովհաննէս որ յաշխարհին Գուգարաց»։ Այնուհետև՝ «Եւ սա ինքն Յովհաննէս ևս՝ բազումս պատերազմել ընդ այլազգիս՝ հուսկ յետոյ ետ զքաղաք իւր ի ձեռս նոցա. և ինքն բանի մի ընկերօք ճանապարհորդեալ ընդ Կասպից ծով՝ գնաց յԱժտարխան. և անդ մեծարեալ յիշխանէ տեղւոյն՝ եգիտ պատիւ ի նմանէ»[48]։

Կողմնորոշումների վերաբերյալ մեր այս ենթադրությունը չի՞ խանգարում հետևյալ փաստերի առկայությունը։ Իվան Կարապետի զեկուցագրում ղափանցիների մասին գրված է. «Եւ ևս թագավորին ուքազն նշանց տվի, կարդացին. ոխչ միայրերան ասում ան թէ, մեք թագավորին ծառայ եանք»[49]։ Զալապի քեխան 1724 թ. նոյեմբերի 5-ին արտաքին գործոց հանձնաժողովին տվել է նույն-

47 «Արարատ», 1877, ԺԱ, էջ 412։

48 Մատենադարան, ձեռ. 2888, թգ. 338։ Հմմտ. Մ. Չամչեան, նշվ. աշխ., էջ 800, Մ. Մաղաքիա-Թեոփիլեան, նշվ. աշխ., էջ 186։

49 Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի..., էջ 214։

պիսի վկայություն։ Իվան Կարապետը հակված էր արքունիքին ցույց տալու, թե ինքը Հայաստանում մեծ գործունեություն է ծավալել։ Մյուս կողմից, հայկական շարժման շահերը պահանջում էին նաև նման հավաստիացումներով ռուսներին գրավել իրենց կողմը։ Որ պատվիրակը հեռվից-հեռու էր ծանոթ Լափանի իրավիճակին, երևում է նրա 1725 թ. մայիսի 11-ի զեկույցից. «Իսկ այժմ սուրհանդակներ եկան Երևանից, հարցրինք՝ ի՞նչ տեղեկություններ կան։ Ասացին որ՝ յոթը հարյուր հոգի եկել է դեսպանի հետ, չենք իմանում, մերոնցից է, թե թագավորի որդի Շահնավազ խանի մարդն է։ Նրա անունը Դավիթ բեկ է։ Նա ապրում է Ղափանում։ Տեղացի հայերին հավաքել է իր շուրջը։ Թուրքերը եկել են, կռիվ են տվել և նրանցից շատերին կոտորել։ Այժմ, ասում են, որ այնտեղ թուրքեր չկան»[50]։

Արցախի հայերն աշխատում էին ամեն կերպ հրապուրել ռուսներին, հայտնելով, թե հայ ժողովրդի համակրանքը նրանց կողմն է, հաճախ չափազանցված տեղեկություններ էին հաղորդում երկրի հարստությունների մասին և այլն։ Այդ նպատակն ունեին Զելեպիի ու մյուսների հայտարարությունները[51]։ Իսկ երբ ռուսները խոստովանեցին, որ թուրքերի և պարսիկների հետ կնքած դաշնագրերը իրենց թույլ չեն տալիս օգնելու հայերին, Աղվանից Եսայի, Ներսես կաթողիկոսները և Արցախի մելիքները հայ ժողովրդի անունից դիմեցին Պետրոս I-ին (1725 թ. հուլիսի 25-ին, երբ նա արդեն մահացել էր), տեղեկացնելով, թե թուրքերի վերջնական նպատակը, հայերին ոչնչացնելուց հետո, «ռուսներից մեր երկիրը մաքրելն է». «Օսմանլուէն ՁՌ(6000) մարդ մեզ վերայ ղօշուն եկին. ձեր զօրութեամբն կոտորեցինք, և մէկ փաշա ողջ բռնեցինք. զնա խօսացրինք, դուք ինչպես էք եկել այս երկիրս, նա ասաց, մեր թագաւորն հրաման է արարել, որ պիտի մեք այս երկիրներս հայն և ղզլպաշն փչացնեմք. չուն որ ըռուս թագաւորի զօրքն ծովի այս կողմս են անցել, մեք նոցա վերայ պիտի գնամք. հայն այս մէջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինի, որ մեր ճանապարհն բացուի. նաև ասաց այս փաշան. թէ դուք չէիք այս մէջս մեք հիմա Դարպանդու և Պաքու վերայ էինք գնացել, որ զատիմի մերն է»[52]։ Ղափանի շարժման ռուսական կողմնորոշման մասին վկայողները Արցախի ռուսասեր մելիքներն էին և Պետրոս դի Սարդիս Գիլանենցը։ Վերջինս գրում էր. «Մեր հայոց ասկարն որ բոլորվել ան՝ ասում ան՝ թէ ԿՌ(60000) մարդ այ, Գ(3) բօլկ ան, որ Գ(3) տեղ նստած ան՝ նոցայ մին աչկն Աստուծոյ լուսին այ, մին աչքն մեծ թագաւորին ճանայպարին այ... էն խեղջ խայէրն՝ որ բոլորվել ան՝ մեծ Եփրատօր թագաւորին անման ան բոլորվել»[53]։ Ղափանցիների՝ մեղ հայտնի միակ հավաստիացումը իրենց ռուսական կողմնորոշման մասին 1726 թ. Մխիթարի գլխավորությամբ շարադրված ուղերձն է[54]։

Անհետաքրքիր չէ նաև այն հարցը, թե սյունեցիները որտեղից էին ձեռք բերում զենք ու զինամթերք։ Այդ կապակցությամբ, հենվելով մի մասնավոր փաստի վրա, Ա. Աբրահամյանը գրում է. «Եվ այսպես, պարզվում է, որ սյունեցիները հրազենը ձեռք էին բերում Թավրիզի առևտրական շուկա-

50 Նույն տեղում, էջ 229։ Նամակի բնագիրը տե՛ս էջ 226։

51 Տե՛ս Կ. Եզյան, նշվ. աշխ., էջ 379, 387, 445 և այլն։

52 Կ. Եզյան, նշվ. աշխ., էջ 422։

53 «Կոռնակ Հայոց աշխարհին», 1863, թ. Բ, էջ 209։

54 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 3, էջ 83—99. Պ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 273—274։

յում»[55]։ Դժվար է հավատալ, սակայն, որ ապստամբների միակ հույսը Թավրիզի շուկան լիներ։ Կարծում ենք, որ ապստամբները զենք կարող էին ձեռք բերել զանազան ճանապարհներով, պատրաստում էին և իրենք։

Դավիթ բեկի պատմության հեղինակը հայ մարտիկների յուրաքանչյուր հաղթանակ նկարագրելուց հետո շեշտում է, թե նրանք տիրեցին թշնամու ունեցվածքին։ Հասկանալի է, որ գրավված գույքի մեջ մտնում էին զենքն ու զինամթերքը։ Իսկ ավար վերցրած անասունների մի մասը բնականաբար պիտի օգտագործեին իբրև պարեն։ Պատմության համառոտ խմբագրության մեջ, որ մեքենագիր օրինակից հրատարակել է պրոֆ. Ա. Աբրահամյանը, կարդում ենք. «Եւ ինքն (Մխիթար զօրագլուխն) դարձ արարեալ անտի եկեալ ժամանակ ինչ բնակեցաւ ի յամուրն Խնձորէկս, և անդ իւրոց զօրացն հարեալ թոփով, սպանին»[56]։ Ա. Աբրահամյանը այս առթիվ 58-րդ ծանոթագրության մեջ զարմանքով գրում է. «Հայերը թնդանոթներ չունեին, Սյունիք թնդանոթ կարող էին բերել և գործածել թուրքական զորքերը»[57]։ Այնինչ շատ բնական էր մտածել, որ թուրքերի թնդանոթների մի մասը, իբրև ռազմական ավար, կարող էր անցնել հայերի ձեռքը։

Գևորգ Մելքիսեդեկյան-Խուբովը իր Գավազանագրքում ավարի մեջ հիշում է և զենքը. «Դարձեալ ժողովեալ այլազգեացն 22 հազար վառելոց ի Մեղրի քաղաք և առաքեաց Դաւիթ զտէր Աւետիք և զՄխիթար զապիրատս իւր 66. միայն կորովելօք և հնարիւք և ահարկութեամբ և անպատմելի քաջութեամբ զորս կոտորեցին և զորս գետակուր կորուսին և ինքեանք աւարաց և զարդուց և զինուց նոցա տիրեցին»[58]։

Այս հարցին վերաբերող շատ տեղեկություններ կան Գ. Շերմազանյանի վերոհիշյալ ուղեգրության մեջ։ Ծերունի Սրապիոնը պատմում էր. «Դավիթ բեկի դալու օրեն տարածվել էր ամենայն տեղ լուր, թե ռուսի թագավորը մեծ զորքով դուրս է եկած Դարբանդ, Բագու և գալիս է հայերի հետ միանա, ընդդեմ պարսից կռիվ անե, և սրա համար էլ սարի էն կողմի, այսինքն Գյուլիստանի, Խաչենի, Վանանդի, Դուզախի և Զարաբերթի հայ մելիքները զորք են պատրաստում։ Էս էլ ավելացնում էին, թե ռուսի թագավորը մեծ գումարի դրամ, վառոդ, արճիճ է ղրկել հայերի համար, բայց վրաց թագավորն գրավել է, չէ կամենում առաքել, շատերն էլ հաստատում էին, որ վրաց թագավորն ուղարկել է, բայց սարի էն կողմի վերոհիշյալ մելիքները թույլ չեն տալիս բերեն մեզ հասցնեն։ Էս եկավ-եկավն, ասուլիսն որքան հայերին քաջալերում էին, հույս էին տալիս, էնքան էլ թշնամիները վհատում էին։ Բայց նրանց ուշանալն և սուտ լինելն մերերի ակնկալությունները ի վերջո ի դերև հանեցին»[59]։

Առանձնապես հետաքրքիր է Սրապիոնի մյուս վկայությունը, որի համաձայն աղջիկները, կանայք ոչ միայն «պատմուճաններ, կարովի արախչիներ, վառոդի ու գնտակի ամաններ, կոճերի փաթաթոցներ (տոլաղ), շապիկ նախշած կուրծքով և այլ հագուստներ կկարեին, կատեղնագործեին», այլև վառոդ

55 «ՊԲՀ», 1972, № 4, էջ 173—174։ Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի..., էջ 86։

56 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3, էջ 107։ Ուղղումները կատարել ենք Ս. Փեշիկյանի հոդվածի համաձայն։

57 Տե՛ս նույն տեղում, էջ 113։

58 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1950, № 1—2, էջ 71։ Հմմտ. Մ. Չամչեան. նշվ. աշխ., էջ 796։

59 «Արարատ», 1877, թ. ԺԱ, էջ 419։

էին պատրաստում։ Աղջիկները «յուրյանց նշանածները պատերազմի տաք տաք ժամանակն են ընտրած»։ Սրապիոնն ինքն էլ Որոտանի բերդի առման ժամանակ է ընտրել հարսնացու. «Երբ վառոդս պակսեց, հանդուցյալն երկու բուռն՝ յուր ձեռոք շինածեն պարգևեց ինձ։ Ահա տեսեք ի՞նչով էին պարապում էն ժամանակն կանայք»[60]։

Հարցի մասին որոշ պատկերացում կարելի է կազմել նաև անուղղակի աղբյուրների օգնությամբ։ Հնարավոր է, որ ռուսները ապստամբներին տրամադրած լինեն զենք ու ռազմամթերք։ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի մի թղթում գրված է. «...յալբաթէ բարաթըն, առճիճըն տէք պարոն էյվազին, որ բերի, և մին էլ խնդրէլամ՝ որ մի գիր յինք առուս աղարկէս ղօսպօտին բրղայդէրին վերայ, որ մեզ թէ բարութ պէտկ լինի՝ տայ»[61]։

1724 թ. նոյեմբերի 5-ին արտաքին գործոց հանձնաժողովին արված հայտարարության մեջ ասվում էր, որ Ղարաբաղի ապստամբների զորքը զինված է հրացանով և սուսերով, հեծյալները՝ ատրճանակով, «վառոդ և արճիճ նրանք բավականաչափ ունեն, և այդ զենքը, վառոդը և արճիճը պատրաստում են հայերը իրենք, որովհետև չնայած երկաթի ու պղնձի հանքեր կան, բայց թնդանոթ սարքող վարպետներ չունեն»[62]։ 1729 թ. հոկտեմբերի 21-ին Թարխան յուզբաշին նույն հանձնաժողովին հայտարարել է, թե ղարաբաղցիները կրում են իրենց պատրաստած զենքերը[63]։

Իվան Կարապետը «բարոն գրափ Գավռէլ Իվանիչ Գոլովքինին» գրում էր. «էսպես կռուարար խալղ որ էս տեղ կա (խոսքը Ղարաբաղի մասին է), ոչ ինչ տեղ չկայ, ղզլպաշի երկրում էսօր ԺԲՌ(12000) մարդ ձիաւոր ողջ չախմախով. ֆուֆանկ, ողջ թուրով հազիր են, այլ և առանց ձիով էլ յէնչանք որ աստուած խպար, ու ողջին էլ թաֆանկ կայ, ամէն որ (օր) Ժ(10) թուֆանկայ շինում ու չախմախայ շինում, այլ և էս տեղ քան (հանք) ան գտել արջիջի, երկաթի և պղնձի, քանի անգամ գրեցի հրամանոցդ թէ մին Ժ(10) ուստա ուղարկէք, դոյ որ քանը բանացնի, և ձեր հրամանոցէդ մի խպար չարէկ և ամենայն քանի համար քոլն էլ պոլայ»[64]։

Հավանաբար Ղափանում դրեթե նույն պայմաններն են եղել։ Ղափանում, ինչպես և Ղարաբաղում, զենքի կարիքը մեծ է եղել, և ապստամբությանը զինվորագրվածներ կային, որ զենք չունեին[65]։ Ի վերջո պետք է նկատել, որ հատկապես լեռնաբնակ ժողովրդի մեջ զենքի գործածությունը սովորական երևույթ է եղել։ Հայը չէր կարող և չէր ապրում անզեն. ինքնապաշտպանության անհրաժեշտությունը թելադրում էր զենք ունենալ և կարողանալ գործածել։ XVIII դ. վերջին Հովսեփ Էմինը, խոսելով դարասկզբի հայ ազատագրական

60 «Արարատ», թ. ԺԻ, էջ 448։ Համեմատության համար բերենք նույն դարի սասունցիներին վերաբերող մի վկայություն. «Հեպոյի գունդը զինված էր ոչ նվազ թշնամի զորքից, լավ վահաններ, ճապուկ, ճոճուն հեզարեն նիզակներ, պատրույկավոր հրացենք, լահորի ջյուհերտեր թըեր, լայնալիճ նետեր, որոց նմուշը ունին տակավին, Տիգրանակերտի դաշույններ, հատու նաճախներ կռում էին սասնյայք։ Յուրաքանչյուր մարդ ուներ երկու հրացան, օրիորդներ և մանկտիք լեցնում և կարկառում էին կռվող սիրականներին» («Մուրճ», 1895, № 1, էջ 113)։

61 «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, Բ, էջ 212։

62 Կ. Ե զ յ ա ն , նշվ. աշխ., էջ 386։

63 Տե՛ս նույն տեղում, էջ 445։

64 Նույն տեղում, էջ 426։ Կ. Եզյանը անթվակիր այս նամակը մոտավորապես 1725 թ. հուլիսին է դնում։

65 Տե՛ս նույն տեղում, էջ 390։

կռիվների մասին, նշում էր, թե «լեռնաբնակ սև հայերը ազատ էին և իրենց մանկութենեն իսկ զենք կը գործածեին»[66]։

Այսպիսով, Ն. Ադոնցի, Ե. Փեշիկյանի, Ա. Հովհաննիսյանի, Պ. Հարությունյանի հոդվածներում և հետազոտություններում արծարծվել ու լուծվել են Դավիթ բեկի գլխավորած ազատագրական շարժման վերաբերյալ բազմաթիվ կարևոր հարցեր։ Մի քանի այլ աշխատություններում, սակայն, բավարար ուշադրություն չի դարձվել մի շարք աղբյուրների ու փաստերի վրա, իսկ մյուս կողմից՝ հաճախ օգտագործվել են այնպիսի նյութեր, որոնց վավերականությունը կասկածելի է։ Երբեմն չափից ավելի կասկածամիտ վերաբերմունք է հանդես բերվել Ղուկաս Սեբաստացու «Պատմության» նկատմամբ, որոշ փաստերի կողմնակալ, արհեստական մեկնություններ են տրվել։ Ընդունելի չեն մասնավորապես Գուգարաց Հովհաննես իշխանի և Դիզակի Ավան յուզբաշիի նույնացումը, մելիքների՝ Շահնավազին ուղղված համախոսականը հերյուրանք, կեղծիք համարելը։ Դեռևս չլուծված են մնում ազատագրական շարժման հետ կապված մի շարք խնդիրներ, ինչպես՝ Ղափանի ապստամբների հարաբերությունները Վրաստանի ու Արցախի ապստամբների հետ, նրանց վերաբերմունքը և դիրքորոշումը ռուս արքունիքի նկատմամբ և այլն։ Վերջապես, եթե ճիշտ են Հ. Բրուշինսկու և Մ. Մաղաք-Թեոփիլյանի հաղորդած տեղեկությունները, ապա Դավիթ բեկը ծնված պիտի լինի 1672 թվականին։

ЗАМЕЧАНИЯ ПО ВОПРОСУ ИСТОРИИ ВОССТАНИЯ ДАВИД БЕКА

А. Г. МАДОЯН

(Резюме)

Наши представления о восстании в Кафане начала XVIII в., возглавляемом Давид Беком, опираются главным образом на произведение «История Давид Бека», которую на основе повествования Степаноса Шаумяна, Тер-Аветика и других участников восстания изложил член венецианской конгрегации мхитаристов Гукас Себастаци.

В статье рассматривается научно-историческая и источниковедческая ценность этого произведения, его данные сопоставляются с рядом сведений других источников, касающихся восстания, многие из которых, несомненно, достойны пристального внимания. Такие сведения содержатся в трудах Карапета Шахназаряна, Галуста Шермазаняна, Георга Мелкиседекяна-Хубова и др. Показывается, что в исследованиях некоторых историков нашли место явные противоречия и промахи, факты неуместного доверия к некоторым документам (памятная запись Таги Кузанова, свидетельство относительно генеалогии Степаноса Давитова и др.), отрицается отождествление гугаркского князя Ованеса с Дизакским Аваном юзбаши. Окончательное выяснение вопросов об ориентации участников кафанского восстания и приобретения ими оружия нуждается в новых фактах. В конце статьи, исходя из сведений, касающихся биографии руководителя восстания Давид Бека, приблизительно определяется год его рождения (1672).

66 «Հովսեփ էմին. իր կյանքն ու արկածները». «Հայրենիք», 1926, 13 ապրիլի։